

Արմավիր մարզի Բաղրամյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների
2014թ. դեկտեմբերի 21-ի արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Դիտորդների հավատարմագրումն իրականացվում է ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ	30, մաս 2	մինչև 11.12.2014	ԿԸՀ
2	Համայնքում ընտրական տեղամասերը կազմավորվում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ	147, մաս 6	մինչև 1.12.2014	Լիազոր մարմին
3	Համայնքում տեղամասային կենտրոնները սահմանվում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 20 օր առաջ	147, մաս 6	մինչև 1.12.2014	Համայնքի ղեկավար
4	Ընտրական տեղամասերի համարները սահմանվում և ԿԸՀ ներկայացվում են սահմանելուց հետո երկօրյա ժամկետում	50, մաս 1 կետ 3	մինչև 3.12.2014	ԸԸՀ
5	Ընտրողների ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 17 օր առաջ	147, մաս 6	մինչև 4.12.2014	Լիազոր մարմին, ՏԿ տարածքը տիրապետող
6	Քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ընտրողները ծանուցվում են ընտրության նշանակվելուց հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ	11, մաս 6	մինչև 18.12.2014	Լիազոր մարմին
7	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացվում է քվեարկության օրվանից ոչ ուշ քան 5 օր առաջ	12, մաս 1	մինչև 16.12.2014	Քաղաքացու դիմումի հիման վրա՝ լիազոր մարմին
8	Թեկնածուների գրանցման փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են քվեարկության օրվանից ոչ շուր, քան 25 եւ ոչ ուշ, քան 21 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն	147, մաս 4	26.11.2014 - 30.11.2014 մինչև ժամը 18:00	Թեկնածուներ, լիազոր ներկայացուցիչներ
9	Թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուր, քան 21 եւ ոչ ուշ, քան 19 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն	147, մաս 5	30.11.2014 - 2.12.2014 մինչև ժամը 18:00	ԸԸՀ
10	Թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիրն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում	6, մաս 5	3.12.2014 - 7.12.2014	Թեկնածուներ, լիազոր ներկայացուցիչներ
11	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7 օրը, ավարտվում՝ քվեարկությունից մեկ օր առաջ	18, մաս 1 141	9.12.2014 - 19.12.2014 մինչև ժամը 24:00	Գրանցված թեկնածուներ, վստահված անձեր

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
12	<p>Համայնքի ղեկավարի թեկնածուները իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են</p> <p>նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ</p> <p>Ավագանու անդամի և մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուները 500.000 դրամը գերազանցող գումար ծախսելու դեպքում նախընտրական հիմնադրամի մուծումների և դրանց օգտագործման հայտարարագիրը ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են սույն կետում նշված ժամկետում</p>	27, մաս 1 140, մաս 2	18.12.2014 մինչև 23.12.2014	Թեկնածուներ
13	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի, կատարվում է</p> <p>մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը ներկայացնելու ժամկետի սկիզբը</p>	42, մաս 5	մինչև 1.12.2014	ԿԸՀ
14	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը ԿԸՀ ներկայացվում են</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 20, և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն</p>	42, մաս 6	1.12.2014 - 3.12.2014 մինչև ժամը 18:00	Ածխաբերություն ունեցող կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), ԸԸՀ
15	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումն ընդունվում է</p> <p>ոչ ուշ քան տեղամասային ընտրական հանձնաժողովի 1-ին նիստի համար սահմանված ժամկետի սկիզբը</p>	42, մաս 4	մինչև 6.12.2014 ժամը 12:00	ԸԸՀ
16	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերը հրավիրվում են</p> <p>հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին</p>	42, մաս 7	6.12.2014 ժամը 12:00-ին	ԸԸՀ
17	<p>Ինքնաբացարկի մասին դիմում կարող է ներկայացվել</p> <p>քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ, մինչև ժամը 18:00-ն</p>	139, մաս 2	մինչև 11.12.2014 ժամը 18:00	Թեկնածուներ
18	<p>Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկատվություն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է</p> <p>քվեարկության օրվանից 10 օր առաջ</p>	10, մաս 2 57, մաս 6	11.12.2014	Լիազոր մարմին
19	<p>Քվեաթերթիկները տպագրվում են</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 10-ը եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ</p>	57, մաս 6	11.12.2014 - 18.12.2014	ԿԸՀ
20	<p>Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում է</p> <p>քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 5 եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ</p>	58, մաս 3	16.12.2014 - 18.12.2014	ԿԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
21	Ընտրողների ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով ԿԸՀ-ին տրամադրվում են քվեարկության օրվանից 2 օր առաջ	10, մաս 4	19.12.2014	Լիազոր մարմին
22	Ընտրողների ցուցակները (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված 2 օրինակից, տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում է քվեարկության օրվանից 2 օր առաջ	10, մաս 3	19.12.2014	Լիազոր մարմին
23	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է քվեարկության օրվանից 2 օր առաջ	11, մաս 4	19.12.2014	ՏԸՀ նախագահ
24	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	55, մաս 3	20.12.2014 մինչև ժամը 24:00	Համայնքի ղեկավար ԸԸՀ, ՏԸՀ
25	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները եւ կնիքների փաթեթները հանձնվում են քվեարկության նախորդ օրը	57, մաս 7: 10 58, մաս 4	20.12.2014	ԸԸՀ
26	Տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեաթերթիկները, ընտրողների ցուցակների էջերը ստորագրվում են քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն	59, մաս 7	20.12.2014 մինչև ժամը 24:00	ՏԸՀ
27	Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում է քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին	62, մաս 1	21.12.2014 ժամը 07:00	ՏԸՀ
28	Քվեարկությունը	54, մաս 1	21.12.2014 ժամը 08:00-20:00	ՏԸՀ
29	Ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հաղորդվում է	6, մաս 10	Քվեարկության օրը՝ մինչև ժամը 11:30, 14:30, 17:30 և 20:30	ՏԸՀ նախագահ
30	Տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփվում և արձանագրությունը հրապարակվում է ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո	71, մաս 5	22.12.2014 մինչև ժամը 06:00	ՏԸՀ նախագահ
31	Ընտրական փաստաթղթերը և կնիքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում	71, մաս 9	22.12.2014 մինչև ժամը 08:00	ՏԸՀ նախագահ եւ քարտուղար
32	Քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրվում են քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում	74, մաս 1	22.12.2014 մինչև ժամը 14:00	ԸԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
33	Վերահաշվարկի, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներն ընդունվում են քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն	48, մաս 1	22.12.2014 մինչև ժամը 12:00-18:00	ԸԸՀ
34	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ԿԸՀ ներկայացվում են քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում	58, մաս 5	մինչև 24.12.2014	ԸԸՀ
35	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վերահաշվարկի աշխատանքներն իրականացվում են դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը 14.00-ն	48, մաս 6	23.12.2014 ժամը 09:00 - 26.12.2014 մինչև ժամը 14:00	ԸԸՀ
36	Ընտրությունների արդյունքներն ամփոփվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը	74, մաս 8	26.12.2014	ԸԸՀ